## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՆԴ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հուլիսի 16-ին կնքված N «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՆԴ-19/2.1» պայմանագրում 2019 թվականի սեպտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է ապրանքի մատակարարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով:

**Փոփոխության նկարագրություն:** Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով նախատեսված համազգեստի մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրացուցային օրով՝ մատակարարման ժամկետը սահմանելով մինչև 20.10.2019թ.:

**Փոփոխության հիմնավորում:** Պայմանագրի 8.5 և 8.6 կետերը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 16.07.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՆԴ-19/2.1 պայմանագրի

Ք. Երևան

<<18>> սեպտեմբերի 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ազատ Ազատյանի, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 16.07.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՆԴ-19/2.1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով նախատեսված համազգեստի մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրացուցային օրով՝ մատակարարման ժամկետը սահմանելով մինչև 20.10.2019թ.:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

**Գ Ն Ո Ր Դ**
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ.

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**
«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ
ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472300000170000
ՀՎՀՀ 00803554
Էլ. հասցեն՝ kkfactory@mail.ru
Հեռ. (011) 286190

(ստորագրություն) Կ.Տ.